




“ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆՔ ՏՂՈՅԸ ՈՐ ԲՆԵՒ ԳԱՆ” ԴՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԺԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1883

ԹԻԻ 7



ԲԷՐՈՒԻ ՄԷՋ ՀԻՆ ՇԷՆՔԵՐ

Բէրուի մէջ կան շատ մը հին շէնքեր որ զարմանք պատճառած են ամէնուն որ այցելած են Բէրու, և տեսած են այն շէնքերը: Սպանիացիք 1500 և 1550 թուականներուն մէջ տեղաբաւեցին Բէրուի երկիրը, բայց յիշեալ շէնքերն այն թուականներէն շատ ժամանակ առաջ կային, և անոնց

ԲԷՐՈՒԻ ՄԷՋ ՀԻՆ ՇԷՆՔԵՐ

թուականն անձանօթ է: Առաջին պատկերին մէջ կը տեսնուին աւերակներ որ կը գտնուին Գիդիդագա լճին մօտ, և կը բաղկանան հին շէնքերու մնացորդներէ և հին անդրի արձաններէ: Արձաններէն ոմանք են երեսուն ոտք երկայն և եօթնևտասն ոտք լայն միակտուր քարէ: Այս խոշոր քարի կտորները կը նմանին Սիինքսին,

որ կայ Գահիրէի բուրգերուն մօտ, և խոշոր կուռքերուն որ ցիրուցան կան Նեղոսի եզերքը:

Երկրորդ պատկերին մէջ կը տեսնուի շէնք մը որ կը կոչուի Մեհեան արեգական ի Գուզզոյ: Աւանդութիւնը կ'ըսէ թէ առաջին ինգան (թագաւոր) և անոր կինն որ կը կոչուէին «Էբէ» և «Էբէ»-ան, կը ճամբորդէին ոսկի գաւազան ի ձեռին, և ըսուած էր անոնց

Թէ ուր որ դաւազանը մտուէր գեա-
նին մէջ և անյայտ ըլլար, հոն պար-
տէին կառուցանել քաղաք մը: Այս-
պէս Գուրգոյի գերբը ընտրուեցաւ,
և թագաւորն և անոր յաջորդները
չինեցին այն սքանչելի մեհեանը: Հի-
մա մեհեանին մէկ մասը միայն մնա-
ցած է, բայց ասի բաւական է ցու-
ցնելու թէ չէնքը շատ հոյակապ էր:
Շէնքին մէջ կան այլ և այլ տեսակ
քարեր, յորոյ ոմանք թանկագին են
և հեռաւոր տեղերէ բերուած: Բայց
մեհեանին ամենէն սքանչելի զարդն էին,
ոչ թէ ճարտարապետական շքեղու-
թիւնն որով շինուած էր, այլ կուռ-
քերն որովք լի էր: Մեհեանին արև-
մտեան կողմը կար պատկեր արեգա-

լամ էր, և գիտէր տեղափոխել ա-
հագին ծանրութիւններ, զորս այժմու
մեքենայից միջոցաւ իսկ դժուար է
իրենց տեղերէն վերցնելով տանիլ
ուրիշ տեղեր:

Ս Է Ր

Սիրելի տղայք, սերն է անկիւնա-
քար ճշմարիտ ֆրիստոնէական կենաց:
Ով որ չսիրեր զԱստուած, չիրնար պըն-
դել թէ ինք Աստուծոյ որդի է: Արդ,
կ'ուզեմ քանի մը բան ըսել ձեզ նախ
թէ ինչպէս կարելի է ունենալ այս-
պիսի սէր, և թէ ինչպէս կարելի է
ցուցնել այն սէրը:

Տղայ մը ի՞նչպէս սկսելու է սիրել
զԱստուած: Աստուծոյ Սուրբ Հոգին


օրհնութիւնները: Բայց ո՞րչափ մեծ է
անոր բարերարութիւնն յայսմ որ տը-
ւած է զՅիսուս մեզ Փրկիչ: Ապաքէն,
երբ յիշենք թէ մենք մեղաւորներ
ենք, և թէ Աստուած առաւ զՅիսուս
փրկել զմեզ ի մեղաց, պարտինք շատ
սիրել զԱստուած: Երախտագիտու-
թիւնը չարժեքու է զմեզ ի սէր: Տղայ
մը ի՞նչպէս կրնայ այնչափ կարծա-
սիրտ ըլլալ որ մերժէ իւր սերն առ
օրհնեալ Տէրն որ այնչափ բարիք պար-
գեւած է անոր յայսմ աշխարհի, և
պիտի պարգևէ ի հանդերձելու մն:

Բայց դուք կ'ըսէք, « ՉԱստուած կը
սիրեմ, արդ ի՞նչպէս կրնամ ցուցը-
նել այս սէրը:» Չեմ կարծեր որ ե-
թէ իրօք ունիք այս սէրը ձեր սրտին
մէջ, դժուարութիւն պի-
տի կրէք զայն ցուցնե-
լու: Գժուարին չէ ձեզ
ցուցնել ձեր հօր կամ
մօր թէ կը սիրէք զա-
նոնք: Բայց կրնամ ձեզ
քանի մը բան ըսել թէ
ինչպէս կրնաք ցուցնել
ձեր սէրն առ Աստուած:

Չանացէք ըլլալ այն-
չափ կատարեալ որչափ
կարելի է: Չանացէք
ըլլալ նման ֆրիստոսի,
և այսպէս ձեր սէրը
յայտնի կ'երևի: Բաւա-
կան մի համարիք սէր
ունենալ ձեր սրտին մէջ
միայն, այլ պատմեցէք
այն սէրն այլոց: Այս-
պէս ձեր սիրոյ լոյսը պի-
տի փայլի յօգուտ այ-
լոց, և այսպէս ձեր բա-
րեկամներն և ծանօթ-
տեսներն թէ դուք ար-
դարև կը սիրէք զԱստուած:

Ք Լ Ո Ր Ո Ֆ Ո Ր Մ

Դէպք մը, որ մօտեքս պատահե-
ցաւ, մեր ուշագրութիւնն արթնցոց
խորհելու թէ ինչ մեծ օրհնութիւն ը-
րած է մարդկային ազգին՝ այն անձն
որ գտաւ քրորոֆորմ կոչուած նիւթը:
Մեր ընթերցողներէն ոմանք լսած ըլ-
լալու են այս օգտակար հեղուկին վը-
րայ: Եթէ քիչ մը քրորոֆորմ թաշ-
կինակի մը վրայ թափուելով քանի մը
վայրկեան մարդու մը քթին բռնուի,
մարդը կը թմրեցունէ և յաւի անցողայ
կ'ընէ: Ուստի սովորութիւն եղած է
քրորոֆորմով թմրեցունել այն անձներն
որոց վրայ վիրաբուժական և այլ գոր-
ծողութիւն պիտի կատարուի: Բանի



ՔԵՐՈՒԹ ՄԵՋ ՆԻՆ ՉԵՊԵՐ

կան, որ էր Բելուի հին թագաւոր-
ներուն աստուածը: Այն պատկերն
էր զուտ ոսկիէ, և այնպէս դրուած
էր որ առաւօտեան արեգական լոյսը
զարնելով անոր՝ սքանչելի կերպով կը
լուսաւորէր մեհեանին ներսը: Շէնքին
մէջ կայ անուշ ջրոյ մեծ հոր մը: Ջրը
հորին լայնութիւնն է երեսուն ոտք,
և մարդիկ սանդղով կ'իջնեն ջուրին
երեսը որ մեհեանին գաւթէն եօթա-
նասուն ոտք վար է:

Ընչաքաղց Սպանիացիք կողոպտե-
ցին բոլոր մեհեաններուն մէջ գըտ-
նուած ոսկին, մեծամեծ գումարներ
առին տեղացի թագաւորներէն և կոր-
ծանեցին անոնց կառավարութիւնը:
Այս աւերակը կը տորվեցնեն մեզ թէ
դարեր առաջ այն երկրին մէջ կար
ժողովուրդ մը որ այլ և այլ արուես-
տից մէջ մեծ յառաջադիմութիւն ը-

է որ կը դարձունէ մեր սիրտերն ու-
ղիղ ճամբան: Այն Հոգին կրնայ լը-
ցունել մեր սիրտերը սիրով առ Աստ-
ուած: Ուստի, եթէ արդարև կ'ու-
զենք սիրել զԱստուած, լաւագոյն
բանը զոր կրնանք ընել, է աղաչել
զՀոգին սուրբ որ տայ մեզ այն սէրը:
Չեմ կրնար բացատրել թէ ինչպէս
Սուրբ Հոգին կը շարժէ մարդոց սիր-
տերը և կը դարձունէ զանոնք առ
Աստուած, բայց Սուրբ գիրք կ'ըսէ
մեզ թէ Աստուծոյ Հոգին կ'ընէ զայս:
Եթէ կ'ուզէք սիրել զԱստուած, խըն-
դրեցէք Սուրբ Հոգիէն տալ ձեզ նոր
սիրտ, սիրտ որ ըլլայ լի սիրով առ
երկնաւոր Հայրն որ կը սիրէ զձեզ:

Ապա իբրև յարմարագոյն միջոց այն
նպատակին հասնելու, խորհեցէք թէ
Աստուած ինչպէս կը վարուի ձեզի հետ:
Աստուած կու տայ ձեզ կենաց բոլոր

ները պիտի սիրէք զԱստուած:

մը շարժած առաջ Աւետարեբրի խմբա-
գրին տասը տարեկան մէկ որդին, մինչ
կը խաղար՝ ծառէ մը վար ինկաւ, և
աջ թեկ ոսկրը արմուկի յօդուածէն
դուրս ելաւ: Ի սկզբան ոսկրը սխալ
գրուեցաւ, և այս սխալը չհասկցուե-
ցաւ մինչև որ թեկն վարի ոսկրը վե-
րի ոսկրին վրայ դարձ փակած էր ա-
նոր, և հաւանական չէր թուեր որ
ոսկրը դարձեալ իւր տեղը դրուէր,
ուստի վախ կար որ խեղճ տղուն թեկը
խեղ պիտի մնար: Սակայն քանի մը
ճարար վիրաբոյժներ որոշեցին փորձ
ընել տեղէն ելած ոսկրը տեղը դնե-
լու, թէև արդէն
ինը շարժած ան-
ցած էր յորմէ հե-
տէ արկածը պա-
տահած էր: Քրո-
րոֆորմով թմրե-
ցուցին սղայն, և
վիրաբոյժներն
հաստատամտու-
թեամբ և համբե-
րութեամբ գրե-
թէ ժամ մ'աշ-
խատելէ ետքը
կարող եղան ոսկ-
րը սխալ տեղէն
բաժնել և բուն
տեղը դնել: Ա-
ռանց քրորոֆոր-
մի եթէ ոչ անկա-
րելի, գէթ շատ
գոյնար պիտի
ըլլար այս գոր-
ծողութիւնը, և
խեղճ տղայն պի-
տի կրէր անտա-
նելի ցաւ: Սակայն
ի շնորհս քրորո-
ֆորմի մկանունքը
թուլցան, և ար-

դետին եզերքը գտան փայտաշէն հին
աւան մը:

Յաղթականք գրաւեցին այն տեղն,
և ըրին զայն Մեծին Բրիտանիոյ մէջ
Հռոմէական իշխանութեան կեդրոն:
Փոխանակ փայտաշէն աւանին շքեղ
քաղաք մը կառուցուեցաւ, և հա-
րուստ Հռոմայեցիք հոն կը դիմէին
պերճութեամբ սպրեւու համար: Ոչ
նուազ քան չորս Հռոմայեցի կայսերք,
այսինքն Ալբրիանոս, Սեպտիմիս Սե-
ւերոս, Կարակալլա և Կէդա բնակած

անոր բնակաց մէջ կային շատ հա-
րուստ Հրեաներ: Քաղաքը շրջապատ-
ուած է հին գեղեցիկ պարսպով մը,
և լի է յիշատակօք այլ և այլ ազգաց
որ տիրեցին այն քաղաքին գրեթէ եր-
կու հազար տարուոյ միջոցի մէջ:

Վերի պատկերին մէջ տեսնուած ե-
կեղեցին է այն քաղաքին շքեղագոյն
չէնքը: Չորս անգամ քանդուած, և
չորս անգամ շինուած է: Առաջին
չէնքը շինուած էր աւելի քան հազար
տարի առաջ:



ՆՈՐԲ ՔԱՂԱՔԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ղան քնացաւ բոլոր գործողութեան
ատեն, և հիմա ազէկ է, և յոյս կայ
որ ֆլաստեալ թեկը քիչ օրէն միւս թե-
ւին պէս առողջ պիտի ըլլայ:

ՆՈՐԲ ՔԱՂԱՔԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ
Այս գեղեցիկ շէնքն Անգղիոյ նշա-
նաւոր քաղաքներէն մէկուն մէջ կը
գտնուի: Աւելի քան 1800 տարի ա-
ռաջ, այսինքն Քրիստոսի 79 թուա-
կանին երբ Հռոմայեցւոյ զօրքն ընդ-
հրամայատարութեամբ Ալբրիգուլայի կը
նուաճէին զՄեծն Բրիտանիա, լոնստ-
նէն իբր 200 մղոն դէպ ի հիւսիս, Ուզ

են հոն այլ և այլ ժամանակներու մէջ,
և կ'ըսուի թէ Մեծն Կոստանդիանոս
հոն ծնած է, և հոն երեք Քրիստու-
նէական եկեղեցիներ շինուած են ի
սրատիւ Կոստանդիանոսի մօր, Հեղի-
նէ գլխոյն:

Երբ Հռոմայեցիք թողուցին զՄեծն
Բրիտանիա, Երբ քաղաքը շատ փո-
փոխութեանց ենթակայ եղաւ: Քա-
ղաքն երկար ատեն մնաց Դանիացւոյ
ձեռքն, ապա ինկաւ Նորմաններու
ձեռք, որ եկած էին Գաղիայէն: Միջին
դարուոյ մէջ քաղաքն եղաւ կեդրոն
մեծ առևտրոյ և հարստութեան, և

Հին ՀԱՅՏԵՐԵՆ ԳԻՐԳԷ ՄԸ ԱՌՆՈՒԱՏ
Տէրն է գրեալ յօրէնքն հին
Մատամբն սուրբ աստուածային,
թէ պինդ որահեւ ըզկիրակին,
եւ մի' գործեր ինչ ի նըմին:
Եթէ պահէք ըզկիրակին,
Հօտ, անդաստանք ձեր բազմացին,
Թէ հակառակ կենայք նըմին,
Սմէն բարիք ձեր խափանին:
Ռամիկք մարդկան Հայոց ազգին
Որք ոչ պահէք ըզկիրակին,
Ոչ էք նըման դուք կուսպաշտին,
Եւ ոչ Տաճկին և ոչ Հրէին:


ԱՆԳՂԻՈՅ ԹՂԹԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՅՐ ՊԱՇՏՕՆԵԱՅՆ

Չարմանալի է որ Անգղիոյ թղթատա-
րութեան ընդարձակ և կնճռու պաշ-
տօնին գլուխն է այնպիսի անձ մը, որ
իւր կուրութեան պատճառաւ կը թուի
անյարմար այն գործին: Կուրութիւնն
արդարեւ մեծ գոթախտութիւն է, բայց
ևս աւելի մեծ է այս անձին հաստա-
տամտութիւնը և յաջողակութիւնը:
Մր. Ֆոսէզ, այս է այս զարմանալի
անձին անունը, փոխանակ յաղթուե-
լու իւր ձախողութենէն, և տալու զինք
անյուսութեան և լքման, քաջութեամբ
խիղախեց ամեն գոթախտութեան դէմ,
և մեծ պատասխանատուու-
թիւն առնելով յիւր վե-
րայ, կատարեց նախ քէ մալ-
րիճի համալսարանին մէջ
ուսուցչութեան պաշտօն,

յետոյ ընտրուեցաւ անգամ
Անգղիոյ խորհրդարանին,
և հիմա Մր. կրասթոնի
պաշտօնեաներէն է:
Մր. Ֆոսէզ է մին այն
նշանաւորագոյն անձանց որ
ունեցած են մասն Անգղիոյ
կառավարութեան մէջ: Է-
բորտովին կոյր, և կորու-
սած է իւր տեսութիւնն ի
պատանեկութեան քէ մալ-
րիճ քաղաքը վառ օդի
պայթմանէ: Այսպիսի ձա-
խողութիւն մը բաւական
է անկարող ընել շատերը
հասարակաց գործերու
մասնակցութենէ. բայց Մր.
Ֆոսէզ ընդհակառակն այն-
չափ փութով զհետ եղաւ
այնուհետև ուսման և գի-
տութեան, որ եղաւ իւր
ժամանակին հմտագոյն
մարդոց մին: Քաջ տեղ-
եակ է քաղաքական տնտեսութեան
և ուսողութեան, մեծ հմտութիւն
ունի մանաւանդ պատմութեան և
գրագիտութեան: Հասարակաց խոր-
հրդարանին մէջ սիրելի և մեծարոյ է
ամենուն: Մր. Ֆոսէզ ունի ոչ սակաւ
մտերիմ բարեկամներ որ կ'օգնեն նմա,
ունի մանաւանդ շատ ազնիւ կին, որ
ոչինչ ընդհատ քան զամուսին իւր յա-
ռաջացած է գիտութեան և մատենա-
գրութեան մէջ:

Մր. Ֆոսէզ թղթատարութեան պաշ-
տօնէութիւնն ընդունելէն ետքը մա-
նաւանդ ցուցուց մեծ զօրութիւն և
հանճար: Թղթատարութեան պաշտօն-
եայ մը Անգղիոյ մէջ մինչև ցարդ իւր
բոլոր պաշտօնէութեան ժամանակ չը-
գործեց այնչափ օգտակար փոփո-
խութիւններ վարչութեան այն ճիւ-
ղին մէջ, որչափ գործեց Մր. Ֆոսէզ:
Ժամանակաւ այս երեւելի անձը ատե-
նաբանութիւն մը ըրաւ իբր երեք
հարիւր կոյրերու, և ակնարկելով իւր
զրկուելն ի տեսութենէ մինչ 25 տարե-
կան էր, ըսաւ. «Երբ այս գոթախտու-
թիւնը պատահեցաւ ինձ, հարկ հա-
մարեցայ խորհիլ ժամանակ մը թէ այս
նոր վիճակիս մէջ ինչ տեսակ կեանք
ընտրել պարտ էր ինձ: Բարեկամնե-
րէս շատերը խրատ կու տային հրա-
ժարել ամէն գործէ և վարել հայե-
ցողական կեանք: Բայց շատ երկար

կ'ընդունիմ, որչափ կ'ընդունէի յա-
ռաջ:
Կան նաև ձեզի համար, որ նոյն
պարագաներու մէջ կը գտնուիք, առատ
նիւթեր զուարճութեան և վայելման,
եթէ ունիք բաւական քաջութիւն
ընտրելու անոնցմէ մին: Անոնք որ կու-
րուսած չեն իրենց տեսութիւնը՝ կըր-
նան սորվիլ ինչ, թէ լաւագոյն օգ-
նութիւնը զոր կրնան ընել կուրաց այս
է, այսինքն կարողացունել զանոնք,
եթէ հնար է, ապրիլ իբրև անկախ
մարդիկ: Անոնց որ կոյր են ի ծնէ,
սորվեցունելու է, եթէ հնար է, շա-
հիլ անձամբ իրենց ապրուստը. իսկ
անոնց որ յետոյ եղած են կոյր, օգ-
նելու է, եթէ կարօտ են
օգնութեան, իրենց տան
մէջ, և ոչ կոյրերու հա-
մար յատուկ ապաստա-
նարանի մէջ: Տունը, իւր
բոլոր ուրախութեամբք և
զուարճութեամբք, կ'ըն-
ծայէ անոնց այնչափ բերկ-
րութիւն որչափ այլոց: Ուս-
տի, եթէ հնար է, պէտք
է չհանել զանոնք իրենց
տունէն, իրենց ընտանեաց
զրկէն:»



Մր. ՖՈՍԷԶ ԵՒ ԱՆՈՐ ԿԻՆԸ

խորհրդու պէտք չունեցայ որոշելու
համար թէ լաւագոյն ընտրութիւն չէր
այն: Ուստի որոշեցի, և որոշմանս մէջ
մնացի հաւատարիմ. որոշեցի ապրիլ
այնպէս՝ որպէս թէ կորուսած չէի
տեսութիւնս: Արդարև կան շատ գոր-
ծեր զորս կոյր մը չի կրնար ընել, կան
սակայն ոչ սակաւ գործեր զորս կրնան
ընել նաև կոյրք. նա մանաւանդ գի-
տեմ կոյրեր որ շատ գործեր ընելու
քան զիս աւելի կարող են: Երբ
տեսութիւնս կորսնցուցի, կային շատ
գործեր որոց փափաքող էի. խորհե-
ցայ սակայն այնպիսի գործեր ընտրել
զորս կարող էի յառաջ տանիլ. և
ասոնցմէ հիմա այնչափ զուարճութիւն

Ինչպէս որ ամառուան մէջ ձիւն, և
հունձքի ատեն անձրև, այնպէս ալ
յիմարին պատիւ չվայելք:

ԱՒԵՏԱԲԵՐՆԵՐՈՒ ԳԻՆԸ
ԱՄՄԱԿԱՆ (Հայերէն էրու, և Հայ-
Տահերէն), փոսթայի ժախքով, տարին
6 դահեկան է:
Ամբիկայի Միսիսնարաց ըն-
թմբագր-
Ֆիլանթրոպիկ եօգոյնու:
ԿՈՍՏԱՆԴՆՈՒ
ՅԱՐԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՆՈՐ ՊՕՅԱՆՆԱՆ